

Այս սահմանադրութեան ճշգրիտ պահպանմամբ յառաջ եկան Հայոց եկեղեցւոյ համար հոգելից եւ ուսեալ եկեղեցականներ, որոնք ոչ միայն իբրեւ սրբակեաց վանականներ եղան օրինակելի, այլ եւ իբրեւ ուսեալ եւ բարեկրօն վարդապետներ վայելեցին ժողովրդեան մէջ համբաւ: Fr. Eugenio di S. Benedetto Բոկուտն Կարմեղեանց մեծաւորը, որ 1624—1626 տարիներուն առթիւ իր այցելութեան ի Պարսկաստան ծանօթացած է Մեծ Անապատէն ելած այս հոգեւորականներուն, զովութեամբ կը խօսի անոնց բարեկիրթ վարքի մասին իր Տեղեկագրին մէջ, զոր 1627, Փետր. 24ին ներկայացուցած է Ս. Ժողովին, ուսկից յառաջ կը բերեմ քաղուածաբար հետեւեալ տողերը¹. «Ասպահանի Հայերու մէջ ժամանակէ մ'ի վեր երեւան եկած են քանի մ'անձնաւորութիւններ, որոնք կ'ապրին արտաքոյ կարգի խիստ կեանք մը եւ կը վայելն ժողովրդեան քով սրբութեան հռչակ: Անոնք վարդապետ կը կոչուին. բաժնուած զանազան հայարնակ վայրերու վրայ՝ առաքելաբար կը շրջին երկրէ երկիր, գիւղէ գիւղ քարոզելով, ուսուցանելով եւ խորհուրդներ մատակարարելով: Ասկէ յառաջ առ ի չգոյէ վարդապետութեան, յորդորի եւ օրինակի, չատերը կ'իյնային մեծամեծ մեղքերու մէջ, այսպէս կ'արձակէին իրենց օրինաւոր կիներն եւ ի նորոյ ամուսնութիւններ կը կնքէին. իսկ

¹ Դիւան Տարածման Ս. Ժողովոյ. Հատոր 189 (Lusitania, India et Japonia), էջ 258—259: